



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

«22» հունիսի 2020թ.

N 5

ԻՐԱԶԵԿՄԱՆ ԹԵՐԹԻԿ

**Ոչ առևտրային կազմակերպության կողմից ԱԱՀ-ի շեմը
որոշելու վերաբերյալ**

Հարց

Ոչ առևտրային կազմակերպության կողմից ստացված դրամաշնորհները ներառվում են արդյո՞ք ԱԱՀ-ի շեմը որոշելիս իրացման շրջանառության մեջ և ո՞ր գումարներից է ոչ առևտրային կազմակերպությունը հաշվարկելու և վճարելու ԱԱՀ՝ 115-ը գերազանցած մասի համար, թե ամբողջ:

Պատասխան

ՀՀ հարկային օրենսգրքի՝

- 4-րդ հոդվածի 1-ին մասի 41-րդ կետի համաձայն՝ ապրանքի մատակարարումը ապրանքի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումն է մեկ անձից մեկ այլ անձի՝ որևէ ձևով կատարվող հատուցմամբ (այդ թվում՝ մասնակի հատուցմամբ կամ դրամաշնորհների կամ սուբսիդիաների ձևով հատուցմամբ) կամ անհատույց,

- 4-րդ հոդվածի 47-րդ կետի համաձայն՝ աշխատանքի կատարումը աշխատանքի կատարման արդյունքի սեփականության իրավունքի փոխանցումն է մեկ անձից մեկ այլ

անձի՝ որևէ ձևով կատարվող հատուցմամբ (այդ թվում՝ մասնակի հատուցմամբ կամ դրամաշնորհների կամ սուբսիդիաների ձևով հատուցմամբ) կամ անհատույց,

- 4-րդ հոդվածի 48-րդ կետի համաձայն՝ ծառայության մատուցումը մեկ անձի կողմից մեկ այլ անձի օգտին գործողության իրականացումն է՝ որևէ ձևով կատարվող հատուցմամբ (այդ թվում՝ մասնակի հատուցմամբ կամ դրամաշնորհների կամ սուբսիդիաների ձևով հատուցմամբ) կամ անհատույց,

- 59-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված են ոչ առևտրային կազմակերպություններին ԱԱՀ վճարող համարվելու դեպքերն ու ժամկետները: Մասնավորապես, նույն մասի 2-րդ կետի համաձայն՝ նույն հոդվածի 4-րդ մասի 1-ին կետին համապատասխան հարկային մարմնում որպես ԱԱՀ վճարող հաշվառված ոչ առևտրային կազմակերպությունները ԱԱՀ վճարողներ են հարկային տարվա այն պահից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը, որ պահին կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ՝ օրենսգրքի 254-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով հաշվարկվող՝ գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունը գերազանցում է 115 միլիոն դրամը: Ընդ որում, հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության 115 միլիոն դրամի շեմը գերազանցելու հիմքով ԱԱՀ վճարող համարվելու դեպքում ԱԱՀ-ն հաշվարկվում և վճարվում է ԱԱՀ-ի շեմը գերազանցող մասով: Գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության 115 միլիոն դրամը գերազանցելու օրվանից մինչև այդ օրվան հաջորդող 20-րդ օրը ներառյալ ոչ առևտրային կազմակերպությունը հարկային մարմին է ներկայացնում հայտարարություն՝ նշելով ԱԱՀ-ի շեմը գերազանցելու օրը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ.

1) ԱԱՀ-ի շեմը (115 մլն դրամը) որոշելիս հաշվի է առնվում ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման իրացման շրջանառությունը, այդ թվում՝ դրամաշնորհների կամ սուբսիդիաների ձևով հատուցմամբ իրականացված,

2) ոչ առևտրային կազմակերպության ընթացիկ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունը ԱԱՀ-ի շեմը (115 մլն դրամը) գերազանցելու դեպքում ոչ առևտրային կազմակերպությունը համարվում է

ԱԱՀ վճարող: Ընդ որում, ԱԱՀ վճարող համարվելու դեպքում ոչ առևտրային կազմակերպությունն ԱԱՀ-ն հաշվարկում և վճարում է ԱԱՀ-ի շեմը գերազանցող մասով՝ ՀՀ հարկային օրենսգրքի 4-րդ բաժնով սահմանված կարգավորումներին համապատասխան, հաշվի առնելով իրականացվող գործարքների մասով օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ԱԱՀ-ից ազատման արտոնությունները: Միաժամանակ, նշված դեպքում ոչ առևտրային կազմակերպությունը գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության 115 միլիոն դրամը գերազանցելու օրվանից մինչև այդ օրվան հաջորդող 20-րդ օրը ներառյալ պարտավոր է հարկային մարմին ներկայացնել ԱԱՀ վճարող համարվելու և որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու վերաբերյալ հայտարարություն՝ նշելով ԱԱՀ-ի շեմը գերազանցելու օրը:

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

